600.0239.24.08.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 օգոստոսի 2016 թվականի №239Ա

քաղ. Երևան

ԱՂՎԱՆ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ 164.225 ՄՀՑ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության 2016 թվականի հուլիսի 1-ի №04/11.1/8470-16 գրությամբ ներկայացված տեղեկատվությունն առ այն, որ Աղվան Մկրտչյանն առանց ռադիոհաճախականությունների օգտագործման համար պահանջվող թույլտվության օգտագործում է 164.225 ՄՀց ռադիոհաճախականությունը,

բ) առանց թույլտվության ռադիոհաճախականությունների օգտագործման հետազոտության արդյունքների վերաբերյալ «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2016 թվականի մայիսի 19-ի ակտը և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, 5-րդ հոդվածի 2-րդ մասի «ժդ» կետը, 3-րդ մասի «ե» կետը և 60-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Աղվան Մկրտչյանին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից դադարեցնել առանց թույլտվության 164.225 ՄՀց ռադիոհաճախականության օգտագործումը և այդ մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
24 օգոստոսի 2016թ.
ժամը 16 00